



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԻՎ – 5

2019Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

ք.Ապարան

09 օգոստոսի 2019թ. ժամը՝ 15:00

Տեղի ունեցավ Ապարան համայնքի ավագանու արտահերթ նիստը:

Նիստին մասնակցում էին Ապարան համայնքի ավագանու 15 անդամներից՝ 8-ը. Արամ Ասատրյանը, Խաչիկ Գեղամյանը, Հայկազուն Թադևոսյանը, Էդգար Կարապետյանը, Ռադիկ Կարապետյանը, Հովհաննես Շահբազյանը, Հովհաննես Վարդանյանը, Մուշեղ Տոնոյանը:

Բացակայում էին՝ Կարեն Գրիգորյանը, Ռոման Գասպարյանը, Աղվան Երեմյանը, Արտյոմ Կարապետյանը, Վահան Մակարյանը, Արա Պետրոսյանը, Արթուր Փարվանյանը:

Նիստը նախագահում և վարում էր Ապարան համայնքի ղեկավար՝ Կ.Եղիազարյանը:

Նիստը արձանագրում էր Ապարանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ա.Կարապետյանը:

Նիստին մասնակցում էին՝ Գ.Աբրահամյանը, Հ.Մկրտչյանը, Վ.Սուքիասյանը, Արկ.Ալեքսանյանը:

Հարակից զեկուցումով հանդես եկավ՝ Վ.Սուքիասյանը:

Ավագանին քննարկեց և միաձայն հաստատեց օրակարգի հարցը:

ՕՐԱԿԱՐԳ

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 09.08.2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ԺԱՄԸ՝ 15:00

1. Ապարան համայնքի Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքից հողագրունտի տեղափոխմանը համաձայնություն տալու մասին:

/զեկ. Վ.Սուքիասյան/

1. /45-Ա/ ԼՍԵՑԻՆ - ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ
ՀՈՂԱԳՐՈՒՆՏԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ:

/գեկ. Վ.Սուքիասյան/

Ապարան համայնքի վարչական տարածքում իրականացվող Մ-3 միջպետական նշանակության ավտոմայրուղու ասֆալտի միջնանորոգումից հետո ճանապարհի կողնակների բարեկարգման և հարդարման աշխատանքները հողագրունտի հանույթի միջոցով կատարելու նպատակով, հաշվի առնելով <<Լիլիթ 87>> ՍՊԸ-ի դիմումը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.05.2019թ. „Հողագրունտի հանույթի կարգը սահմանելու մասին,, N572-Ն որոշումը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն՝ Ապարան համայնքի Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող Ապարանի ջրամբարի տարածքի 0.1 հա հատվածից <<Լիլիթ 87>> ՍՊԸ-ի կողմից հողագրունտի հանույթի տեղափոխմանը՝ պետբյուջեի միջոցներով Մ-3 միջպետական ավտոմայրուղու կողնակների բարեկարգման և հարդարման աշխատանքների իրականացման նպատակով:
2. Ընդունել ի գիտություն, որ սահմանված կարգի 14-րդ հոդվածի համաձայն՝ հողագրունտի հանույթի տեղափոխման թույլտվությունը տրվում է պետական կառավարման մարմնի որոշմամբ, իսկ կարգի 12-րդ հոդվածի համաձայն՝ հողագրունտի հանույթի վաճառքի հետ կապված դրույթը չի տարածվում պետական սեփականություն հանդիսացող հողամասից հանված և պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում կառուցվող օբյեկտի շինարարության դեպքում:

Ավագանի՝

(կողմ - 8)

(դեմ - 0)

(ձեռնպահ - 0)

Ասատրյան Արամ
Գեղամյան Խաչիկ
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Էդգար
Կարապետյան Ռադիկ
Շահբազյան Հովհաննես
Վարդանյան Հովհաննես
Տոնոյան Մուշեղ

Համայնքի ղեկավար՝

Կ. Եղիազարյան



